ուղղուել իմ թոթովախօս լեզուի կապերը, նորա նուիրական պատերի մէջն եմ ճանաչել փոքր ի շատէ մարդկութեան սրբազան պարտաւորութիւնները, և վերջապէս նորա տուած մտաւորական թեւերովն եմ սլացել ըստ իմովսանն գիտութեան ասպարիզի մէջ, և ն. և ն.

Պատուական Հայ եղբայրներ և չքնաղ քոյրեր, այժմ աւարտելով իմ բանից շրջանը, քաղցրաժպիտ դէմքով ահա ներկայացած Ձեր առաջ, խնդրում ձեզնից, որպէս զի քաղցր ակնածութեամբ նայէք և ընթերցասիրէք մեր կաղկաղ և թոյլ գրչի երկասիրութիւնը, և միանգամայն լինէք ներողամիտ դէպ ի Ձեր ազգակից

Ոչիչիչեր Մարդասէրական Ընկերութեան Ա-ոտ Գրէթորէանց

Դէպ. 1870 -դ
Ի Բ-ֆ-ա:

ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑ ՀԱՄԱՄԼԻ ԳԵՂՋ

Խմբագրութեան Բարոյ Ամոտքոյ

Որովհետև եթէ մի ազգի կամ հասարակութեան պիտոյք կախուած լինի հականպատակ շատերի հոգաբարձութիւնից, և կամ լաւ ևս ասել՝ մի ուսումնարան ենթարկուած լինի շատերի իշխանութեան, ակներև կտեսնուի նորա դիւրափոփոխ լինելը, նորա դրութեան հեշտաբար շարժվելը, և երբեմն այսպէս և երբեմն այնպէս ուսումն և անուն ունենալը, պարզաբար ասել՝ անհամաձայն և տարբեր ոգի գտնուելով նոցա մէջ։

Ի շարս այսօրինակ ուսումնարանաց բողոքում էր և Համամլի գիւղի ուսումնարանը, որը որ հինգ կամ վեց ամաց հետէ շարունակութիւն ունէր մի քանի. . Հոգաբարձուաց հոգատարութեամբը դէպ ի անուսումնութիւն . . . Իսկ ևս վստահութեամբ և բերանումն ժպիտ ուրախութեամբ անձամբ անձին իբրև ի տուն և պայծառարան Ազգի՝ տիպուած ազգակցութեան պահանջմունքից հրաւիրեցայ տեսնել ու խնդալ. բայց իբրև մի չնչին մակերևոյթ դիպչելով աչքիս և բաւականին տրխուր վերադարձայ, ցաւելով միանգամայն մանկանց յատկեղ ժամանակի վերայ, որ ի զուր կանցնի, և հասարակութեան յոյսի վերայ՝ որ հաստատուած են այդպիսեաց վերայ. բայց ներկայումս տեղական ժողովուրդը մի արթնութիւն զգալով՝ արդարև պատահեցաւ մի արթուն դիտողի այսօրինակ հասարակական խղճութեանց. վասն զի Անդամ Հոգևոր Կառավարութեան Աղէքսանդրապոլու Տէր Յովսէփ Աւագ Քահանայն իր ազգասիրական եռանդից դրդուած և սովորական գործից*), իբրև նախապատճառ ուսումնարանի կարգաւորութեանը՝ բաւականին աղդու հետևանքներով հասարակութեան ուշը և միտքը դարձնելով դէպի գիտութիւն և ճշմարտութիւն՝ ուղղապէս վերանորոգեց գրէթէ ուսումնարանը բարոքելով նորա ընթացքը, յանձնելով ուսուցչական պաշտօնը ընտիր վարժապետի, և միանգամայն մի դիւրին ճանապարհ պատրաստեց խղճալի մանկտոյն, որի համար յուսալով ամենայն զգացող անձն՝ կնշմարէ, որպէս զի ունի ուսումնարանը այնուհետև արթուն հոգատարի ձեռնարկութեամբ օր ըստ օրէ ազատ քայլեր արձակել դէպ ի ուսումնականութիւնը, և նախանձելի դրութիւն ունենալ, բարոյականաբար զարգանալով՝ ուղիղ և քաջ ընթացքով իրեն բուն նպատակին հասնել։

Ցիրաւի է, զի առաքինի Քահանայի այսօրինակ ազգօգուտ ձեռնարկութիւնը և բարեջանութիւնը չէ մարթ լռութեան տալ, որի համար խնդրելով պատուական Ա-ր-ա-դ, Խմբագրութենէն, եթէ կարելի է պարունակել մի որ և իցէ անկիւնում ի գիտութիւն բարենախանձ մերազնեայց և ի յորդոր ազգասէր բարերարաց։

Ա. Վ. Յ. Ա-ր-ա-դ-ա-ն։

1870 -դ է ի Դեկտեմբերի
Ի Հ-մ-մլի։

(*) Որովհետև բարեջան Քահանայն որպէս այս նմանապէս մի քանի դպրոցներ գտնուած մեր դաւառի մէջ իրենց ընկած դրութիւնից կանգնեցրած եւ բարեկարգութեամբ զարդարած է։